ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04

29 մարտի 2018 թվական

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9(ինը) անդամներ:

Բացակա էին Արտյոմ Ավագյանը, Հայկազ Բաղդասարյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:

Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը:

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու տասնմեկ անդամներից նիստին ներկա են ինը, քվորումն ապահովված է և առաջարկեց սկսել նիստը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 29-ի արտահերթ նիստի օրակարգը՝

1)Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի «Մշակույթի տան հիմնանորոգում» ծրագիրը հաստատելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 32-Ա/

Օրակարգը հաստատելուց հետո ներկայացվեց հերթական որոշման նախագիծը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ «ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ջեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, պայմանավորված Բյուրեղավան համայնքում մշակութային կյանքի որակը բարելավող միջավայր ստեղծելու անհրաժեշտությամբ՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի «Մշակույթի տան հիմնանորոգում» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-9 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 33-Ա/

Օրակարգի հարցերը սպառվեցին:

Ավագանու նիստն ավարտվեց:

Հավելված
Բյուրեղավան համայնքի ավագանու
2018թվականի մարտի 29-ի N 33-Ա որոշման

Հայտի կնքված և ստորագրված բնօրինակի պատճենն ուղարկվում է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն (այսուհետ՝ ՏԿԶՆ) էլեկտրոնային փոստով:
Բնօրինակը (համակարգչով լրացված) հանձվում է ՏԿԶՆ

Պաշտոնական օգտագործման համար			
Սուբվենցիայի Հայտի գրանցման ամսաթիվը		Հաշվառման համարը	
Սոցիալական ենթակառուցվածքների զարգացման ծրագիր		Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կցվում են	
Տնտեսական ենթակառուցվածքների զարգացման ծրագիր		Հայտը պատշաճ կերպով կազմված և ստորագրված է	
Մեքենասարքավորումների ձեռք բերման ծրագիր		Պահանջվող այլ փաստաթղթերը կցված են	
Հայտը համապատասխանում է սուբվենցիաների տրամադրման նպատակով հայտերի գնահատման կարգի 1, 2 և 3-րդ կետերի պահանջներին		Հայտը համաձայնեցված է համապատասխան մարզպետարանի հետ և համապատասխանում է համայնքի 5 ամյա զարգացման ծրագրին	

ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2018 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային ՀԱՅՏ

Ծրագրի անվանումը	ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի մշակույթի տան հիմնանորոգում
Մարզ	ՀՀ Կոտայքի մարզ
Համայնքը /համայնքները	Բյուրեղավան համայնք Բյուրեղավան քաղաք
Համայնքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից	20 կմ
Սահմանամերձ , բարձր լեռնային համայնք	
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը	Մշակույթի տան շենքի հինանորոգման արդյունքում կունենանք հարմարավետ պայմաններով ժամանակակից կառույց, ուր կտեղավորվի քաղաքի արվեստի դպրոցը, քաղաքային գրադարանը: Կստեղծվեն բավարար պայմաններ մշակութային միջոցառումների անցկացման համար, կակտիվանա մշակութային կյանքը, քաղաքի երեխաները և երիտասարդությունը կհաղորդակցվեն մշակութային ժառանգության հետ և կստանան հոգևոր դաստիարակություն:
Ծրագրի	«Բյուրեղավանի արվեստի դպրոցի» ԱՈՒՀ ՀՈԱԿ-ի շենքը գտնվում է վատթար

Իրականացման նպատակը	վիճակում: Մշակույթի տան հիմնանորոգումից հետո դպրոցը կտեղափոխվի այնտեղ, կստեղծվեն պայմաններ արվեստի դպրոցի դասապրոցեսը ավելի որակյալ պայմաններում կազմակերպելու համար:
Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում	Շինարարությունը կապիտալ բնույթի է, որի ավարտի արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքը կավելանա 147.5 մլն ՀՀ դրամով:
Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրա-կանացման նպատակին	Բյուրեղավան քաղաքում ունենալ մշակույթի տուն՝ հագեցած անհրաժեշտ գույքով և այլ պարագաներով, գրադարանով, բազմաբնույթ մշակութային միջոցառումների անցկացման համար նախատեսված սրահով, կրթական գործունեության այլ տեսակների կազմակերպման համար նախատեսված լսարաններով, ինչը կնպաստի մշակութային կյանքի աշխուժացմանը:
Ծրագրի յուրաքանչյուր արդյունքի հասնելու համար անհրաժեշտ միջոցառումները	Շինարական աշխատանքների մրցույթի անցկացում, շինարարության իրականացում՝ ներքին հարդարման աշխատանքների կատարում, շենքի ֆասադի կառուցում, պարսպապատում, ջեռուցման համակարգի տեղադրում, հատակի բետոնապատում, լամինատապատում, սանհանգույցների սալիկապատում, արվեստի դպրոցի տեղափոխություն, գրադարանի տեղափոխություն:
Ծրագրի ազդեցությունը շահառուների վրա	Կստեղծվեն բավարար պայմաններ մշակութային միջոցառումների անցկացման համար, կակտիվանա մշակութային կյանքը, քաղաքի բնակչությունը, հատկապես երեխաները և երիտասարդները կհաղորդակցվեն մշակութային ժառանգության հետ և կստանան հոգևոր դաստիարակություն:
Ծրագրի իրականացման ընթացքում և արդյունքում ստեղծվող աշխատատեղեր	10 ժամանակավոր և 10 հիմնական աշխատատեղ: (շինարարներ,պահակներ,մաքրուհիներ, ուսուցիչներ):
Ծրագրի սպասվող միջնաժամկետ և երկարաժամկետ արդյունքները	Կստեղծվեն ավելի լավ պայմաններ գրադարանից օգտվողների համար, կավելանա ընթերցողների թիվը, արվեստի դպրոց հաճախող երեխաների դասավանդումը կանցկացվի լուսավոր և մեծ դասասենյակներում, ինչը կնպաստի կրթության որակի բարձրացմանը: Հիմնարկը կարող է զբաղվել հիմնադրի սահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝ համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում, լրացուցիչ կրթադաստիարակչական ծրագրերի իրականացում, կրթական գործունեության այլ տեսակների կազմակերպում, մարզամշակութային միջոցառումների կազմակերպում և այլն:
Համայնքի 2017 թվականի բյուջեն և բյուջեի կատարողականը	Համայնքի 2017թ-ի բյուջեի կատարողականը /մլն.դրամ/ Բյուջեի եկամուտների և ծախսերի անվանումը Տոկոս Պլան. Փաստացի 1. Ընդամենը համայնքի բյուջեի եկամուտները 296.7 280.7 96.4 այդ թվում՝ 1.1 Վարչական բյուջեի եկամուտներ, այդ թվում՝ 275.6 266.2 96.6 1.2 Սեփական եկամուտներ 89.1 83.5 93.7 1.3 Ֆոնդային բյուջեի եկամուտներ 21.1 14.5 68.7 2. Ընդամենը հանայնքի բյուջեի ծախսերը,որից՝ 365.3 264.7 72.4

	2.1 Վարչական բյուջեի ծախսեր 261.8 239.6 91.5 2.2 Ֆոնդային բյուջեի ծախսեր 103.5 39.5 38.1 Համայնքի ֆոնդային բյուջեի 2017թ. փաստացի ծախսերի բացվածքը / մլն.դրամ/ Պլան. Փաստացի Տոկոս 1.Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ 10.3 7.5 72.8 2.Ճանապարհային տնտեսություն 18.0 11.8 65.5 3.Գյուղատնտեսություն 2.9 2.4 82.7 4.Աղբահանում 1.0 0.9 90.0 5. Բնակարանային շին. և կոմունալ 62.1 15.2 24.5 6.Մշակույթի տուն 9.1 1.6 17.6
Համայնքի 2018 թվականի բյուջեն	**289.4** մլն. ՀՀ դրամ 2018թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի պլանավորում 1.Ընդամենը համայնքի բյուջեի եկամուտներ 302.4 մլն. դրամ որից՝ 1.1 Վարչական բյուջեի եկամուտներ 289.4 մլն.դրամ որից՝ Սեփական եկամուտներ 101.8 մլն.դրամ 1.2 Ֆոնդային բյուջեի եկամուտներ 13.0 մլն.դրամ 2. Ընդամենը համայնքի բյուջեի ծախսեր 366.8 մլն.դրամ որից՝ 2.1 Վարչական բյուջե 266.9 մլն.դրամ 2.2 Ֆոնդային բյուջե 112.9 մլն.դրամ Համայնքի ֆոնդային բյուջեի 2018թ. պլանավորված ծախսերի բացվածքը / մլն.դրամ/ Պլան. 1. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ 3.7 2.Ճանապարհային տնտեսություն 18.5 3.Գյուղատնտեսություն 1.6 3.Մշակույթի տան հիմնանորոգում 72.1 5.Բնակարանային շինարարություն 17.0 Ընդամենը 112.9
Համայնքի 2018 թվականի բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով 2018 թվականի կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան	Համայնքի 2018թվականի բյուջետային մուտքերը՝ ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով, 289.400.700 դրամ է, ֆոնդայի մասով նախատեսվել է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախս՝ 112.874.800 դրամի, որից 72.041.800 դրամը նախատեսված է մշակույթի տան հիմնանորոգման համար, 18.500.000 դրամ ասֆալտապատման աշխատամքերի համար, 6.478.400դրամը մեքենա-սարքավորումների և 3.200.000դրամ այլ հիմնական միջոցների համար, 15.000.000 դրամը պուրակի կառուցապատման աշխատանքների համար: Հողի օտարումից 2017 թվականին համայնքային բյուջե է մուտքագրվել 7.800.000 դրամ, 2018 թվականին կանխատեսվում է 8.000.000 դրամի մուտք:

հաշվարկներով	
Ծրագրի ընդհանուր բյուջեն	66 416 330 ՀՀ դրամ (100%)
Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը	47 819 758 ՀՀ դրամ (72%)
Այլ ներդրողներ	
Ծրագրի իրականացման տևողությունը	Սկիզբ 25.04.2018թ. Տևողությունը՝ 5 ամիս
Ծրագրի ծախսերը	Մանրամասն ներկայացնում ենք ծախսերը՝ կցելով նախագծանախահաշվային փաստաթղթերը:
Ամսաթիվ	"27" մարտ 2018թ.

Այլ տեղեկություններ ծրագրի մասին. *Մշակույթի տան հիմնանորոգման նախահաշվի ընդհանուր արժեքը կազմում է 147.5 մլն դրամ: Մնացել է իրականացնելու 66.0 միլիոն դրամի շինարարական աշխատանքներ:*

Համայնքի տնտեսական պատասխանատու՝ *Սարգիս Ղազարյան*
Հեռախոս, էլ. Փոստ՝
093346590. ghazaryan-sargis@mail.ru

Համայնքի ղեկավար

_____
(անուն, ազգանուն)

ԿՏ.

Ընդդեմ անդամներ՝

ԳԵՈՐԳԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ _____

ՎԻՇԱՐԱՄ ԱՊՐԵՍՅԱՆ _____

ԱՎԵՏԻՔ ԱՍՈՅԱՆ _____

ԱՐՄԱՆ ԽԱՆՋԱԴՅԱՆ _____

ԱԼԻՍԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ _____

ՎԱՐԴԱՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ՀԵՅԿ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ _____

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ Լ. ԱՎՈՒՇՅԱՆ